манское море», на другой группе карт—«море Ледовитое» (m. Glaciale), на третьей группе карт — «море Северное» (m. Septentrionale), на четвертой группе карт — «море Московское» (Mare di Moscoviae); наконец, на одной карте Татарии (Tartaria), изданной в XVIII в., море к западу от Новой Земли обозначено было именем «Mare Septentrionale», а к востоку от Новой Земли— «Mare Ruvsis» — Русское море, к югу от которого простирается территория Samogedā.

Картографические источники

1) Карта мира (в полушариях), на арм. языке, размер — 120 × 150 см. Амстердам, 1695.

2) Материалы по истории русской картографии. Первая серия, тт. I и II, вторая серия, вып. 1. Карты всей России, северных ее областей и Сибири. Собрал В. Кордт. Киев, 1906.

3) Альбом (собрание) карт-репродукций под общим заглавием Monumenta cartographica на латин. и франц. языках. Париж, 1928.

И. СТЕПАНЯН

ՄԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՆԿԱՐԻ ՄԱՍԻՆ

Վերջին տարիներին հայտնաբերված մեծարանակ արխիվային նյութերը հնարավորություն են տալիս ավելի ճիշտ բնորոշել XVII դարի երկրորդ կեսի և XVIII դ. առաջին քառորդի հայ ազատագրական շարժման կարկառուն դեմքերից մեկի՝ Իսրայել Օրու գործունեությունը։ Շնորհիվ այդ նյութերի մենք հնարավորություն ենք ստանում ըստ արժանվույն գնահատելու քաղաքական այդ նշանավոր գործչի ծառայությունները։

Վերջերս անգլիական արվեստագիտական «Ապոլլո» («Apollo») ամսագրի 1959 թ. հունիս ամսի համարում (№ 412) մեր ուշադրություն գրավեց Ֆրոյլիխ-Բյումի (Fröhlich-Bume) մի հոդվածը, նվիրված XVIII դ. առաջին կեսի իտալական խոշոր նկարիչ Ջիովաննի Անտոնիո Պելեգրինիի ստեղծագործությանը և հատկապես նրա նորահայտ նկարներին, որոնք գտնվել են Բենսբերգ ամրոցում և Բավարիայի պատկերների այլ հավաքածուներում։ Դրանցից մի քանիսի վերարտադրություններ տրված է ամսագրի վերոհիշյալ համարում։ Առաջին նկարը կրում է «Հայաստանի դեսպանները ուղևորվում են էլեկտոր Իոհանն-Վիլհելմ Պֆալցի մոտ» («Envoys of Armenia to the Elector Johann Wilhelm von der Pfalz»). Նկարի մեծությունն է 322,5 սմ × 122,5 սմ։ Այն գտնվում է Շլայսհայմում (Մյունխեն)։ Այդ նկարը, մեր կարծիքով, պատմական խոշոր մի վկայական է և գալիս է նոր լույս սփռելու ինչպես Իսրայել Օրու գործունեության, այնպես էլ հայ-գերմանական հարաբերությունների տվյալ շրջանի պատմության վրա։

Նախքան նկարի բովանդակությանն անցնելը, մի քանի խոսք Պելեգրինիի մասին։

Ջիովաննի Անտոնիո Պելեգրինին ծնվել է 1665 թ. ապրիլի 29-ին Վենետիկում։ Նրա հայրը ձեռնոցագործ էր և ծագումով Պադուայից էր։ Պելեգրինին իր կյանքի մեծ մասը անց է կացրել օտարության մեջ՝ Անգլիայում, Ֆրանսիայում, Հոլանդիայում, Պրուսիայում և Ավստրիայում։ Մեռել է Վենետիկում, 1742 թվականին։ Նկարչությունը նա ուսանել է Հռոմում և Վիեննայում նկարիչներ Պագանիի, Լուկա Ջիորգանոյի և Սեբաստիանոս Ռիչչի ղեկավարությամբ։ Քիչ բան է հայտնի նկարչի վաղ շրջանի ստեղծագործության մասին։ 1700-ական թթ. սկզբին նա դրավում է Վենետիկում անգլիական դեսպան, Մանչեստրի առաջին դուքս Չարլզ Մոնտեգյուի ուշադրությունը։ Վերջինս, Անգլիա վերադառնալիս, իր հետ տանում է նաև նկարիչ Պելեգրինիին, նկարազարդելու համար Կիմբոլտոնի իր դղյակը (1708)։ Անգլիայում Պելեգրինին մնում է 5 տարի և 1713 թ. հեռանում է այնտեղից։

1713—14 թթ. մենք Պելեգրինիին գտնում ենք Հռենոսյան Պալատինատում, որտեղ նա պատրաստում է դեկորատիվ բնույթ կրող 14 նկարներ Բենսբերգ ամրոցում, փառաբանելու համար էլեկտոր Իոհանն-Վիլհելմի գործունեությունը։ Պատահական չէր Պելեգրինիի հայտնվելը Պալատինատում 1713 — 1714 թթ.։ Ինչպես հայտնի է, այդ տարիներին վերջ գտավ իսպանական ժառանգության համար մղվող երկարատև պատերազմը, կնքվեցին Ուտրեխտի (1713) և Ռաշտատի (1714) հաշտության

պայմանագրերը։ Կուրֆյուրստ Իոհանն-Վիլհելմը, ըստ Երևույթին, բոլոր հիմքերը ուներ մտածելու իր կյանքի և գործունեության փառաբանման մասին, քանի որ ինքը, լինելով Եվրոպայի խոշորագույն և ազդեցիկ իշխաններից մեկը, փոքր դեր չէր խաղացել այդ ժամանակաշրջանի եվրոպական իրադարձությունների, ինչպես նաև խաղաղության հաստատման մեջ։ Եվ, ի թիվս այլ նկարների, Պելեգրինին, կուրֆյուրստի հանձնարարությամբ, նկարում է Հայաստանի դեսպաններին ներկայացնող պատկերը։ Այդ պատկերը առաջին անգամ ցուցադրվել է Մյունխենում, 1958 թ., Ռոկոկո ոճին նվիրված ցուցահանդեսում։

Նկարի բովանդակությունը հետևյալն է. նա ներկայացնում է Հայաստանից եկած դեսպաններին, որոնց այցելության նպատակն է՝ օգնություն խնդրել էլեկտորից իրենց երկիրը թուրքական լծից ազատագրելու համար։ Նրանց առաջնորդում է մի կին, որն իրենից ներկայացնում է խաղաղությունը, իսկ աջ կողմում գտնվող կիներ ամեն տեսակ օրհնություններ և շնորհներ է բաշխում պատերազմներից և անհավատ նվաճողներից արդեն իսկ ազատագրված երկրին։

Ոչ մի կասկած չի կարող լինել, որ նկարում պատկերված «Հայաստանի դեսպանները» կարող էին լինել միայն Իսրայել Օրին և Մինաս վարդապետը։

Քանի որ նկարիչը սույն պատկերը գծել է 1713—14 թթ., ապա նա չէր կարող տեսած լինել ոչ Իսրայել Օրուն, որն արդեն մահացած էր և ոչ էլ Մինաս վարդապետին, որը 1700 թ. հետո Պալատինատում չէր եղել։ Այնուհետև ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ նկարում պատկերված դեսպանները տարիքավոր են, այն դեպքում, երբ Իսրայել Օրին վերջին անգամ Պալատինատում գտնվելիս եղել է 45—46 տարեկան, իսկ Մինաս վարդապետը՝ 41—42 տարեկան։ Հետևաբար, եթե նույնիսկ Պալատինատում գոյություն են ունեցել Օրու և Մինաս վարդապետի դիմանկարները կամ դրանց էսքիզները, նրանք նկարչին որպես հիմք չեն ծառայել պատկերը գծելու։ Այստեղից պետք է եզրակացնել, որ դեսպանների պատկերները սիմվոլիկ են։ Նույնպես և սիմվոլիկ են դեսպանների հագուստները։ Սակայն և ոչ մի կասկած չի կարող լինել այն մասին, որ նկարիչը ցանկացել է պատկերել Օրուն և Մինաս վարդապետին, քանի որ նրանք են միայն եղել կուրֆյուրստի մոտ եկող հայ դեսպանները։ Կասկած չի կարող լինել և այն մասին, որ պատկերված անձերից մորուքավորը Մինաս վարդապետն է, իսկ բեղերավը, որ մորուք չունի՝ Իսրայել Օրին։

Բայց տարօրինակն այն է, որ նկարում առաջին պլանի վրա դրված է Մինաս վարդապետի պատկերը, իսկ Օրունը՝ միայն երկրորդ պլանի վրա։ Այդ է հաստատում նաև այն փաստը, որ առաջին պլանի վրա գտնվող ծերունին կրում է շղթայով պնակ, մի բան, որ հատուկ է միայն հոգևորականներին։ Ըստ Երևույթին, ինչպես կարծում ենք մենք, Պելեգրինին առաջին պլանի վրա տեղադրելով մորուքավոր Մինաս վարդապետին, ցանկացել է ավելի շատ արևելյան կոլորիտ և ավելի պատկառազդու տեսք տալ նկարին՝ դիտողներին ավելի տպավորելու համար։ Կարծում ենք, որ տվյալ պատկերը նկարելիս, Պելեգրինին չէր կարող խորհրդակցած չլինել էլեկտորի հետ՝ դեսպանների անձնավորության մասին որոշ անհրաժեշտ տեղեկություններ ստանալու համար։ Մոտենալով հարցին այդ տեսանկյունից՝ մենք կարծում ենք, որ որոշ չափով տվյալ նկարի մեջ պահպանված և մեզ են հաղորդված Իսրայել Օրու և Մինաս վարդապետի դիմագծերը։

Սակայն նկարի իրական արժեքը այն է, որ նա գալիս է կրկին անգամ հաստատելու, որ կուրֆյուրստ Իոհանն-Վիլհելմը իսկապես նշանակություն է տվել Իսրայել Օրու առաքելությանը և նրա մշակած ու ներկայացրած ծրագրին, այնքան մեծ նշանակություն, որ հարկ էր տեսել պատրաստել տալու և իր ամրոցում կախելու հայ դեսպանների առաքելությունը պատկերող սույն նկարը։ Այս նկարը գալիս է հերքելու հայ պատմագրության մեջ ընդհուպ մինչև վերջին ժամանակներս արտահայտված և ոմանց կողմից որդեգրված այն կարծիքը, թե Օրին եղել է մի սովորական արկածախնդիր, իսկ նրա պֆալցյան ծրագիրը՝ բորբոքված երևակայության արդյունք, որը իրականությունից շատ հեռու է կանգնած։ Այն հանգամանքը, որ կուրֆյուրստը իր կյանքը և գործերը փառաբանել տալիս չէր մոռանում Հայաստանի դեսպաններին և նրանց առաքելությունը և անհրաժեշտ էր համարում այն դասել իր հիշարժան գործերի շարքը, նկարին տալիս է առաջնակարգ պատմական փաստաթղթի նշանակություն և արժեք։

Կարծում ենք, որ այդ նորագյուտ նկարը հնարավորություն կտա ավելի ևս ճշտելու Իսրայել Օրու դրական քաղաքական դեմքը և նրա քաղաքական գործունեության խոշոր դերը հայ ժողովրդի պատմության մեջ։

Վ. ԴԻԼՈՅԱՆ